02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

24 (1423) • 28 հունիսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Ուժեղացված ծառայություն մարզերում

Ոստիկանության մարզերը սպասարկող ստորաբաժանումներն անցել են շուրջօրյա ուժեղացված ծառայության՝ առաջնորդվելով ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի հանձնարարականի պահանջներով: Նպատակը նույնն է՝ հասարակական կարգի պահպանություն, երթևեկության անվտանգություն, հանցագործությունների եւ իրավախախտումների կանխում ու բացահայտում:

Ամփոփ ներկայացնենք Շիրակի ոստիկանների ծառայության արդյունքները: Ուժեղացված ծառայությունը պատշաճ իրականացնելու նպատակով կազմվել է 70 պարեկախումբ: Դրանցից 45-ը շրջել են մեքենաներով, 25-ը՝ հետիոտն: Ուժեղացված ծառայությանը ներգրավվել է 364 ոստիկան՝ մարզային վարչության տարածքային բաժիններից, մարզը սպասարկող ճանապարհային ոստիկանության ստորաբաժանումից, ինչպես եւ պետական պահպանության գլխավոր վարչության Շիրակի մարզի բաժիններից:

Ոստիկանները գործել են օրինախախտների նկատմամբ չցուցաբերելով ներողամտություն ու հանդուրժողականություն: Արդյունքում՝ տարբեր կասկածանքներով, ինչպես եւ ոստիկանների օրինական պահանջները չկատարելու կամ դիմադրություն ցույց տալու համար Մուշի, Կումայրիի, Ախուրյանի, Ամասիայի, Աշոցքի, Անիի եւ Արթիկի բաժիններ բերման են ենթարկվել ու բերվել 129 անձինք:

Սպանություն կատարողը հայտնաբերվեց

Հունիսի 25-ին ոստիկանության Մաշտոցի բաժնում ստացվեցին օպերատիվ տեղեկություններ, որ Նորք-Մարաշի 17-րդ փողոցի վերջնամասի տներից մեկում սպանություն է կատարվել:

Ոստիկանության օպերատիվ խումբը նշված վայրում հայտնաբերեց սավանով եւ պոլիէթիլենով փաթաթված Երեւանի բնակիչ, 25-ամյա Էլեն Սիմոնյանի դին:

Դիակի վրա կային տասնյակից ավելի կտրած-ծակած վերքեր, իսկ դեմքն ամբողջությամբ ջնջված էր:

Ոստիկանների ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ ճշտվեց կասկածյալի ինքնությունը:

Հունիսի 26-ի առավոտյան ոստիկանության Մարաշի բաժանմունքի ծառայողները կասկածյալին հայտնաբերեցին Նորքի 17-րդ փողոցում եւ, սպանությունը կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին ոստիկանություն:

Կատարվում է քննություն:

Ոստիկանները բացահայտել են դանակահարությունները

Հունիսի 19-ին հիվանդանոցից ոստիկանության Մաշտոցի բաժին հաղորդում է ստացվել, որ որովայնի կտրած-ծակած վերքով բուժօգնության է դիմել 25-ամյա մի երիտասարդ, որն ի վիճակի չի եղել բացատրություն տալու:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Դավիթաշենի 1-ին թաղամասից բերման է ենթարկվել 23-ամյա մի աղջիկ: Նա տվել է խոստովանական ցուցմունք, որ վիճաբանության ժամանակ դանակով ինքն է խփել ընկերոջը:

Նույն օրը հիվանդանոցից ոստիկանության Վաղարշապատի բաժին հաղորդում է ստացվել, որ կրծքավանդակի եւ նախաբազկի կտրած-պատռած վերքերով բուժօգնության է տեղափոխվել 21-ամյա մի երիտասարդ, որն ի վիճակի չի եղել բացատրություն տալու:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ երիտասարդին դանակահարել է 14-ամյա պատանի, որը ներկայացվել է Վաղարշապատի բաժին, ապա հանձնվել ծնողների հսկողությանը:

Հունիսի 22-ին հիվանդանոցից ոստիկանության Մալաթիայի բաժին հաղորդում է ստացվել, որ կրծքավանդակի կտրած-ծակած եւ ծոծրակի պատռած վերքերով բուժօգնության է դիմել 29-ամյա տղամարդ:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ հունիսի 21-ին Բաբաջանյան փողոցում տղամարդուն դանակահարել է 21-ամյա մի երիտասարդ, որը բացատրական աշխատանքների շնորհիվ ներկայացել է ոստիկանության Մալաթիայի բաժին եւ տվել խոստովանական բացատրություն:

Բոլոր դեպքերով կատարվում է քննություն:

էջ 2

Նախկին ղեկավարի ապօրինությունները

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման եւ Շիրակի մարզային վարչությունների, Անիի բաժնի ծառայողների համատեղ միջոցառումներով բացահայտվել են Ձորակապ համայնքի նախկին ղեկավարի ապօրինությունները: Ըստ նախնական տվյալների՝ նա 2014 թվականին կազմել եւ իր ստորագրությամբ ու համայնքի կնիքով վավերացրել է կեղծ քաղվածքներ: Կեղծ բովանդակությամբ գրություններ է ուղարկել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման ղեկավարին՝ իբր Ձորակապի գյուղական խորհրդի կոմիտեի 1991 թ. համապատասխան որոշմամբ՝ «Սառնաղբյուրի խաչմերուկ» կոչվող հանդամասից տարբեր մակերեսներով երկու հողամաս է հատկացվել համայնքի մի բնակչի: Դրանց հիման վրա բնակիչը այդ հողատարածքների նկատմամբ ձեռք է բերել իրավունքի պետական գրանցում, «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպություն» ՊՈԱԿ-ի հետ պայմանագիր է կնքել եւ ստացել շուրջ 84 միլիոն դրամի փոխհատուցում:

Հարուցվել է քրեական գործ:

Խարդախ տաքսիստներ. ոստիկանների բացահայտումը

Հունիսի 22-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնում օպերատիվ կառավարման կենտրոնից խարդախության վերաբերյալ հաղորդում ստացվեց:

1-02 էր զանգել մի հյուրանոցի տնօրեն եւ հայտնել, որ «Զվարթնոց» օդանավակայանում «Օպել» մակնիշի տաքսու վարորդը ֆիլիպինցի երկու զբոսաշրջիկից խաբեությամբ փող է վերցրել: Ձեռնարկված անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, հաղորդումից ժամեր անց, ոստիկանները պարզեցին, որ նշված խարդախությունը կատարել են Երեւանի եւ Արմավիրի մարզի երկու բնակիչ:

Բացատրական աշխատանքի շնորհիվ նույն օրը նրանք ներկայացան «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժին եւ խոստովանեցին կատարածը:

Ըստ նախնական տվյալների՝ վարորդներից մեկը ներկայացրել էր որպես հյուրանոցի աշխատակից եւ, չարաշահելով օտարերկրացիների վստահությունը, ոչ միայն ուղեվարձի, այլեւ հյուրանոցում մնալու համար էին փող վերցրել: Տուժողները միայն հյուրանոցում էին հասկացել, որ իրենց խաբել են:

Հափշտակված գումարը վերադարձվել է օտարերկրացիներին:

Փաստի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Դանակահարողը հետախուզվում էր գողությանը հանցակցելու համար

Հունիսի 21-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ «շտապօգնության» խումբը Ֆրանսիայի հրապարակից կրծքավանդակի եւ բազկի կտրած-ծակած վերքերով բուժօգնության է տեղափոխել 40-ամյա մի տղամարդու:

Ոստիկանության Նոր Նորքի եւ Կենտրոնական բաժինների քրեական հետախույզների համատեղ միջոցառմամբ պարզվել է, որ տղամարդուն դանակահարել է 51-ամյա Արտեմ Ս.-ն, որը բերման է ենթարկվել ոստիկանության Կենտրոնական բաժին: Նրա մոտից հայտնաբերվել է հանցագործության գործիք դանակը:

Պարզվել է նաեւ, որ Արտեմ Ս.-ն 2018 թ. հոկտեմբերից հետախուզվում էր գողությանը հանցակցելու մեղադրանքով:

«Ձշտի» պատանդը

Որոշ ժամանակ քաղաքում թափառելուց հետո վերադարձավ տուն, որտեղ նրան սպասում էին ոստիկանները... էջ 2

Միլիարդատեր գնդապետը

Նրա քրոջ բնակարանում ոստիկանների հայտնաբերված փողը հավասարազոր էր մարզային կենտրոնի տարեկան բյուջեին: էջ 5

«Գողական տղա»

Ալկոհոլ օգտագործած վիճակում հաճախ էր մտածում վնասել ոստիկաններին՝ անկախ նրանց ճանաչելու հանգամանքից: էջ 6

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը հայտարարում է բակալավրի կրթական ծրագրով առկա վճարովի ուսուցման՝ 2019/2020 ուստարվա ընդունելություն

Շրջանավարտներին շնորհվում է իրավագիտության բակալավրի աստիճան եւ տրվում պետական նմուշի դիպլոմ: Ուսման տեւողությունը 4 տարի է:

Ընդունելության կարգին եւ պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության www.police.am կամ կրթահամալիրի www.edupolice.am կայքերում:

Ուժեղացված ծառայություն մարզերում

Սկիզբը՝ էջ 1

Բերման են ենթարկվել Գյումրիում ապրող, այսպես կոչված՝ «օրենքով գող», տասից ավելի քրեական հեղինակություն, նախկինում առանձնապես ծանր եւ ծանր հանցագործությունների մեղադրանքով դատապարտված անձինք:

Ուժեղացված ծառայության շրջանակներում Շիրակի ոստիկանները ստուգել են 640-ից ավելի ավտոմեքենա եւ քրեական հեղինակությունների 14 բնակարան:

Ճանապարհային ոստիկանության պահպանվող հատուկ տարածքներ է տեղափոխվել 16 տրանսպորտային միջոց, որոնց վարորդներն իրենց գործողություններով վտանգել են երթեւեկության մյուս մասնակիցների կյանքն ու առողջությունը: Տասնմեկ վարորդ մեքենա վարելու իրավունք չի ունեցել, երկուսն էլ եղել են ալկոհոլ օգտագործած վիճակում: Ճանապարհային երթեւեկության տարբեր կանոնների խախտման փաստերով կազմվել է 106 արձանագրություն:

Հասարակական անվտանգությամբ մտահոգ՝ ոստիկանության Շիրակի մարզային վարչության եւ ենթակա ստորաբաժանումների ծառայողները, ոստիկանության պետի հանձնարարականի համաձայն, մշտապես իրականացնելու են ուժեղացված նմանօրինակ ծառայություններ՝ հսկողության տակ պահելով բոլոր օրինախախտներին:

Հունիսի 21-ին ու 22-ին ուժեղացված ծառայություն է իրականացվել Արմավիրի մարզում: Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության, ենթակա ստորաբաժանումներից, ինչպես եւ մարզը սպասարկող ճանապարհային ոստիկաններից կազմված օպերատիվ խմբերը շրջել են Արմավիրի քաղաքներում եւ ավտոճանապարհներին: Հայտնաբերվել է իրավախախտման մի քանի տասնյակ դեպք:

Արմավիրի, Վաղարշապատի, Մեծամորի եւ Բաղրամյանի բաժիններ տարբեր կասկածանքներով, ինչպես եւ ոստիկանի օրինական պահանջները չկատարելու համար բերման է ենթարկվել ու բերվել ընդհանուր 210 անձ, այդ թվում՝ քրեական հեղինակություններ ու նախկինում դատապարտված անձինք: Պահպանվող հատուկ տարածքներ են տեղափոխվել 50-ից ավելի տրանսպորտային միջոցներ, որոնց վարորդները չարամտորեն խախտել են երթեւեկության կանոնները՝ սպառնալիք ստեղծելով երթեւեկության մյուս մասնակիցների կյանքի եւ առողջության համար:

Այն վարորդները, որոնք ոստիկանների ներկայությամբ դրսեւորել են ոչ իրավաչափ վարքագիծ, բերման են ենթարկվել բաժիններ: Որոշ դեպքերով հարուցվել են վարչական վարույթներ:

Խաբեությամբ հափշտակված մեքենաները հայտնաբերվեցին

Հունիսի 20-ին ոստիկանության Ավանի բաժանմունքում խարդախության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Քաղաքացին հայտնում էր, որ խաբեությամբ ու վստահությունը չարաշահելով՝ հափշտակել են իր թանկարժեք «Մերսեդես»-ը:

Քաղաքացին ցանկացել էր վաճառել մեքենան եւ հայտարարություն էր տեղադրել համացանցում: Քիչ անց զանգել էր գնորդն, ու պայմանավորվել էին հանդիպել: Մեր ներկայացած անձի հետ հանդիպել էին: Մեքենան հավանել էր, գին էին պայմանավորվել: Գնորդն առաջարկել էր գնալ Խուդյակովի փողոցի իր տուն՝ կանխավճարը տալու: Սուրճ էր առաջարկել ու խնդրել երկու րոպե սպասել, մինչեւ ինքը կգնար ընկերոջից կանխավճարի գումարը կվերցներ ու արագ կվերադառնար: Ժամը 17.00-ի սահմաններում արդեն մեքենան վաճառել ցանկացողները նկատել էին, որ գնորդը տնից դուրս գալիս մեքենայի բանալիները հետն էր տարել: Տնից դուրս գալով՝ հայտնաբերել էին, որ ոչ Մերը կա, ոչ էլ ավտոմեքենան:

Ոստիկանությունում խաբեությամբ «W221» թափքի «Մերսեդես» հափշտակելու վերաբերյալ հաղորդումը միակը չէր: Նախորդ օրը՝ հունիսի 19-ին, նմանօրինակ հաղորդում էր ստացվել նաեւ Էրեբունու բաժնում: Մեքենայատիրոջը կրկին զանգել էր գնորդը, ներկայացել որպես Մեր: Կրկին հանդիպել էին, ուղեկցել էր Էրեբունի փողոցի իբր իր տունը: Կրկին վստահությունը չարաշահելով՝ դուրս էր եկել ու հափշտակել մեքենան: Ի տարբերություն ոստիկանության Ավանի բաժանմունքում արձանագրվածի՝ այս դեպքում գնորդը բնակարանից դուրս գալիս դուռը բանալի-

ով փակել էր ու ապօրինաբար զրկել տուժողներին ազատ տեղաշարժվելու իրավունքից: Նույնաբովանդակ հաղորդումներ կային նաեւ ոստիկանության Շենգավիթի եւ Կոտայքի բաժիններում:

Ոստիկանության տարածքային ստորաբաժանումներն իրականացրին փոխգործակցված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ մի քանի ուղղություններով: Շուտով ոստիկանության Ավանի բաժանմունքում ստացվեցին առաջին տեղեկությունները. Մեր ներկայացածը Մալաթիա-Սեբաստիա համայնքի 30-ամյա բնակիչ է:

Մինչ կպարզվեր հափշտակված մեքենաների գտնվելու վայրը, ոստիկանության Էրեբունու բաժնի ծառայողները տեղեկություններ ստացան 30-ամյա տղամարդու գտնվելու վայրի վերաբերյալ: Օպերատիվ տեղեկություններ կային նաեւ, որ տղամարդը ցանկանում է հատել Հանրապետության պետական սահմանը: Դա կանխելու համար ոստիկանները ձեռնարկեցին հնարավոր բոլոր միջոցները:

Պարզվեց՝ տեղեկությունները ճիշտ էին: Տղամարդը ցանկացել էր արտերկիր մեկնել, բայց սահմանին բռնվել բերման էր ենթարկվել ոստիկանություն:

Զուգահեռ ձեռնարկված միջոցառումներով Ավանի քրեական հետախույզները ճշտել էին նաեւ հափշտակված մեքենան թաքցնելու վայրը:

Ավտոտնակում հայտնաբերվեց ոչ միայն Ավանի ոստիկանների կողմից որոնվող «Մերսեդես»-ը, այլեւ ոստիկանության տարածքային մյուս ստորաբաժանումներում ստացված հաղորդումներով նկարագրված ավտոմեքենաները:

Պարզվեց, որ 30-ամյա տղամարդը «Մերսեդես»-ները հափշտակելուն պես, անմիջապես տեղափոխել էր Ներքին Չարբախում գտնվող ավտոտնակ ու վաճառել էր: Արդեն ավտոտնակում դրանք մասնատվել էին, որոշ պահեստամասեր առանձին վաճառվել, մի մասն էլ խնամքով փաթեթավորվել էր՝ հետագայում իրացնելու համար:

Երեսնամյա տղամարդը կալանավորվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

Թմրանյութ ձկնաբուծարանում

Հունիսի 7-ին ոստիկանության Մասիսի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Սիս գյուղի ձկնաբուծարանի կերի պահեստից պարբերաբար գողություն է կատարվում: Ոստիկանությունն էին հրավիրել ձեռնարկատիրոջն ու հորդորել ձկնակերի պահեստում ստուգումներ անցկացնել: Ձեռնարկատերը հաստատել էր ոստիկանների ունեցած տեղեկություններն ու գողության վերաբերյալ հաղորդում տվել: Մասիսի ոստիկանները հայտնաբերել էին գողությունը կատարած անձանց:

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության, Արարատի մարզային վարչության եւ Մասիսի բաժնի ծառայողները հունիսի 19-ին խուզարկել են ձկնաբուծարանը: Արդյունքում՝ հայտնաբերվել է 34 գրամ դեղնականաչավուն չորացված զանգվածով 7 փաթեթ եւ 15,5 գրամ կանեփի սերմի նմանվող զանգված: Ձկնաբուծարանի տարածքի կիսակառույց ջերմատանը հայտնաբերվել է կանեփի 47 բույս: Ձկնաբուծարանի պահեստարաններում հայտնաբերվել է տարբեր գրառումներով 48 պարկ ձկան կեր:

Ըստ ձեռնարկատիրոջ՝ չորացված զանգվածը մարիխունա է. կանեփը անձամբ ցանել, աճեցրել, ապա չորացրել ու պահել է անձնական օգտագործման համար: Իսկ հայտնաբերված ձկնակերը գնել է ձկներին կերակրելու համար:

Ձկնաբուծարանի սեփականատերն իր առանձնատնից ոստիկաններին է ներկայացրել 84 գրամ մանրացված դեղնականաչավուն զանգվածով 15 փաթեթ եւ պլաստմասսե տարա՝ 132 գրամ նույն զանգվածով: Ներկայացրել է նաեւ մեկփողանի երկու հրացան, 12 մմ տրամաչափի փամփուշտներ եւ ինքնաձիգ՝ փամփշտատուփով: Ըստ տղամարդու՝ հրացանները պատկանում են եղբորը, իսկ ինքնաձիգը 2016 թվականի ապրիլին Արցախում է գտել:

Նույն օրը, ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելու, ապօրինի թմրանյութ պահելու եւ օգտագործելու, ինչպես եւ ապօրինի զենք-զինամթերք պահելու կասկածանքով, բերման է ենթարկվել ոստիկանության Մասիսի բաժին:

Կատարվում է նախաքննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«Ճշտի» պատանդը

Օպերատիվ իրավիճակի դիտարկումները փաստում են, որ դանակահարության դեպքերի աճի միտումը շարունակում է պահպանվել, իսկ այդ մտահոգիչ իրականության գլխավոր դերակատարները հիմնականում երիտասարդներ են, որ անհեթեթ պարզաբանումների ժամանակ անպատասխանատու եւ թեթեւամիտ՝ գործի են դնում դանակն ու «հակառակորդին» զրկում կյանքից կամ առողջությունից, իսկ իրենց՝ ազատությունից: Բազմիցս անդրադարձել ենք հիմնախնդրին, բազմաթիվ օրինակներով վկայակոչել անդառնալի ծանր հետեւանքները, որ անհանդուրժողականության, անխոհեմության արդյունքում են լինում, սակայն խոհեմ լինելու պատրաստակամությունը մնում է անտեսված, կյանքը ողբերգություն դարձնողների թիվը՝ մտահոգիչ:

Սուրեն Սինասյանն ու Արմեն Խաչատրյանն ընկերներ էին ու նաեւ ընդհանուր շատ ընկերներ ունեին թե՛ բակից, թե՛ դպրոցից, թե՛ բուհից: Անհամ կատակների պատճառով հաճախ էին տարածայնություններ ունենում: Նեղանում էին, կոպտում իրար, անմիջապես էլ մոռանում. ընկերներ էին: Բայց շարունակում էին անհամ կատակներն ու իրար նեղացնելը՝ հենց առիթը լինում էր:

Հունիսի 10-ին հերթական անգամ նեղացան իրարից: Արտաքուստ խաղաղված Արմենի հոգում իրականում փոթորիկ էր: Ընկերներին ասել էր, թե՝ ամեն ինչ անցած է, ինքն ու Սուրենն ընկերներ են, եւ նման մանր-մունր հարցերից իրենց ընկերությունը չպետք է տուժի: Ձեւացրել էր: Մտքում վրեժ լուծելու ելք էր փնտրում: Գտավ:

Համալսարանից իրենց շենք Սուրենից շուտ հասավ: Դարանակալեց բակում ու սպասեց նրա գալուն:

Վերջապես Սուրենը երեւաց: Մեկ-երկու բառ փոխանակելուց հետո Արմենը դանակով խփց Սուրենի որովայնին ու փախավ: Տաքսի նստեց ու պատվիրեց քշել Կոմիտասի պողոտա: Ամուսնալուծվելուց հետո հայրն այնտեղ էր ապրում: Զանգեց հորը, թե՝ իջիր տաքսու փողը տուր: Հորն ասաց, որ դանակահարել է Սուրենին: Հայրը զայրացավ, նախատեց, Արմենն էլ թողեց հեռացավ: Որոշ ժամանակ քաղաքում թափառելուց հետո վերադարձավ տուն, որտեղ նրան արդեն սպասում էին ոստիկանության աշխատակիցները...

Բժիշկներին հաջողվեց փրկել Սուրենի կյանքը, բայց առողջությունը վերականգնելու համար տեւական ժամանակ է պետք: Դատաբժշկական փորձաքննությունը երիտասարդի առողջությանը պատճառված վնասը որակել էր ծանր՝ առողջության տեւական քայքայումով: Իսկ նախաքննական մարմինը Արմեն Խաչատրյանի արարքը որակեց քրեական օրենսգրքի 112 հոդվածի հատկանիշներով:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում դեպքից օրեր անց Արմեն Խաչատրյանը հայտնաբերվեց:

Նախաքննությունն ավարտվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հարցազրույց ԱՄՆ հյուպատոսի հետ

Թվում է, թե բոլորը գիտեն, որ փաստաթուղթ կեղծել պարզապես չի կարելի, բայց, պարզվում է, ոչ բոլորն են գիտակցում, որ դա հանցագործություն է՝ քրեորեն պատժելի արարք:

Փաստաթղթեր կեղծելու դեպքեր նկատվում են նաեւ վիզա ստանալու համար դրանք ներկայացնելիս:

Ավելի պարզ ներկայացնենք: Վիզայի համար դիմող քաղաքացին մեծ ցանկություն ունի մեկնել մի երկիր, ուր գնալու կամ այդ երկրում ապրելու համար անհրաժեշտ է, օրինակ, դպրոցի ավարտական ատեստատ: Ի դժբախտություն դիմողի՝ նա չունի ատեստատ: Եվ այս պարագայում որոշում է կեղծել փաստաթուղթը, տվյալ դեպքում՝ ատեստատը, ներկայացնել դեսպանատուն եւ մեկնել: Նախ, այդ կերպ հաջողության հասնելը բացառված է, եւ հետո՝ դա հանցագործություն է, որն ունի իր հետեւանքները:

Թեմայի շուրջ զրուցեցինք Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների հյուպատոս Քրիստոֆեր Ռեյեսի հետ:

- Պարոն Ռեյես, տարբեր տեսակի վիզաների համար ԱՄՆ դեսպանատուն դիմած անձինք հաճա՞խ են ներկայացնում կեղծ փաստաթղթեր:

- Ընդհանուր առմամբ, կեղծ փաստաթղթեր ներկայացնելու դեպքերը Հայաստանում շատ չեն: Նախ ուզում եմ նշել, որ հարցազրույցների ժամանակ ավելի շատ հիմնվում ենք բանավոր զրույցի արդյունքների վրա, փաստաթղթերի մեծ պահանջ մեր կողմից չի ներկայացվում. փորձում ենք հարցազրույցի կամ զրույցի միջոցով ընթացք տալ վիզայի հետ կապված դիմումին, սակայն որոշ վիզաների դեպքում փաստաթղթեր ներկայացնելն անհրաժեշտ է:

- Փաստաթղթերի ստուգման փուլում կասկածներ առաջանալիս համագործակցո՞ւմ եք իրավապահ կառույցների հետ:

- Հյուպատոսական բաժնի աշխատակիցներն ամեն ինչ անում են, որպեսզի կեղծ փաստաթղթեր չներկայացվեն: Դրա համար անհրաժեշտ է, որ մեր աշխատակիցները բավականաչափ տեղեկացված լինեն, թե ինչ տեսք ունեն կամ ինչպիսին պետք է լինեն Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերը, որոնք պահանջվում են քաղաքացիներից: Երբ մենք հիմքեր ունենք կասկածելու, որ փաստաթղթերը կարող են կեղծ լինել, սահմանված ընթացակարգերով աշխատում ենք տեղի պատկան մարմինների հետ եւ փորձում պարզել՝ փաստաթղթերը իրակա՞ն են, թե՝ կեղծ:

- Համագործակցությունը արդյունավետ ու օպերատի՞վ է:

- Այո: Հայաստանում մենք աշխատում ենք մի շարք նախարարությունների ու գերատեսչությունների, այդ թվում՝ ոստիկանության հետ: Ի դեպ, վերջերս հյուպատոսական բաժնի անձնակազմով այցելեցինք ոստիկանության կրթահամալիր, որտեղ ապագա կադրերն են պատրաստվում: Շատ տպավորիչ էր տեսնել, թե ինչ պատրաստվածություն են անցնում մարդիկ, որոնք համալրում են Հայաստանի ոստիկանության շարքերը:

- Ի՞նչ հետեւանք կունենա վիզայի համար կեղծ փաստաթուղթ ներկայացնելը:

- Երբ կեղծ փաստաթղթերի ներկայացումը հաստատվում է, մենք երկու բան ենք անում: Առաջինը՝ պետք է հարգանք դրսեւորվի Հայաստանի Հանրապետության օրենքների ու իրավական գործընթացների նկատմամբ, եւ եթե խնդրո առարկան Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթուղթ է, բնականաբար, այդ տվյալները փոխանցում ենք Հայաստանի իրավասու մարմիններին: Մյուս կողմից, Միացյալ Նահանգների հյուպատոսական օրենքների համաձայն, կարող են լինել հետեւանքներ դիմողի համար. սխալ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում նա կարող է ընդհանրապես զրկվել վիզա ստանալու հնարավորությունից: Օգտվելով առիթից՝ խորհուրդ ենք տալիս, որ ավելի լավ է լինել ազնիվ եւ մերժվել. այդ պարագայում հնարավոր է հաջողության հասնել հաջորդ անգամ, բայց եթե կեղծ կամ սխալ տեղեկատվություն է ներկայացվում, դա հանգեցնում է վիզա ստանալու իրավասությունից վերջնական զրկման:

Պարոն հյուպատոսը նշեց, որ կեղծ փաստաթուղթ ներկայացնելու դեպքում անձը կարող է ընդհանրապես զրկվել վիզա ստանալու հնարավորությունից: Սա հարցի մի կողմն է, իսկ մյուսն այն է, որ հանցագործության համար վիզայից զրկվելուց զատ՝ անձը կկանգնի ՀՀ արդարադատության առաջ:

Մեր երկրում գործող դեսպանատների հետ համագործակցության շնորհիվ բացահայտվել են փաստաթղթերի կեղծման բազմաթիվ դեպքեր: Կեղծել են ատեստատ, դիպլոմ, ամուսնության կամ ապահարզանի, ծննդյան վկայական եւ այլն: Եթե դեսպանատան համապատասխան ծառայության աշխատակիցները փաստաթղթերի ուսումնասիրման ընթացքում կասկածներ են ունենում տվյալ փաստաթղթի կեղծ լինելու հետ կապված, ապա, անմիջապես, տեղեկացնում են ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն, եւ նշված փաստաթղթի իսկությունը ստուգելու նպատակով իրականացվում են մի շարք միջոցառումներ, օրինակ, դատաֆաստաթղթաբանական փորձաքննություն: Երբ արդեն պարզ է դառնում, որ փաստաթուղթը կեղծ է, ապա հարուցվում է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի հատկանիշներով:

Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը՝

1. Իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք օգտագործելու կամ իրացնելու նպատակով կամ այդպիսի փաստաթուղթ իրացնելը կամ նույն նպատակներով կեղծ կնիքներ, դրոշմներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր պատրաստելը կամ իրացնելը, ինչպես նաեւ ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդված

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Օպերատիվ

Թմրամոլները բերման ենթարկվեցին

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության ու թմրամոլության լավագույն կանխարգելումը նման դեպքերի բացահայտումն է, ինչը մասնագիտական հմտություն է պահանջում: Հենց այդպիսի մասնագիտական որակների շնորհիվ օրերս ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ծառայողները բացահայտեցին ապօրինի թմրանյութ պահելու, եւ օգտագործելու հերթական դեպքը:

Քրեական հետախույզները օպերատիվ տեղեկություններն իրացրեցին հունիսի 15-ին: Նորագավիթի 9-րդ փողոցից, ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով, ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին բերման ենթարկեցին Ներքին Շենգավիթի 36-ամյա մի բնակչի: Զննությամբ նրա «ՎԱԶ-2109» մակնիշի մեքենայի սրահից հայտնաբերվեց պոլիէթիլենային տոպրակով դեղնականաչավուն, յուրահատուկ հոտով զանգված: Կասկածվողը ներկայացրեց նաեւ պոլիէթիլենային փաթեթով մեկ կիսատ եւ չորս ամբողջական դեղահաբ: Ըստ նրա՝ դեղնականաչավուն զանգվածը մարիխուանա է, իսկ հաբերը՝ մեթադոն:

Թմրանյութերի օգտագործման եւ անօրինական թմրաշրջանառության հերթական դեպքը բացահայտեցին ոստիկանության Ախուրյանի բաժնի ծառայողները:

Հունիսի 17-ին Ախուրյան քրեական հետախույզները տեղեկություններ ստացան, որ Գյումրիի Նորավան թաղամասի 43-ամյա մի բնակիչ ապօրինի թմրամիջոց է պահում, պատրաստում եւ օգտագործում: Կասկածվողը բերման ենթարկվեց ոստիկանության Ախուրյանի բաժին: Նրա տնակի եւ հարակից տարածքի զննությամբ ոստիկանները հայտնաբերեցին տարաներ՝ յուրահատուկ հոտով հեղուկով, պիրալգին գրառմամբ դեղահաբերի դատարկ տուփեր, ներարկիչներ, որոնցից մեկը 2 մլ սեւ հեղուկով, թղթե տոպրակ՝ սպիտակ զանգվածով եւ թմրանյութի պատրաստման համար անհրաժեշտ այլ պարագաներ:

Երկու դեպքով էլ քննությունը շարունակվում է:

Բռնեցին գողոնը ձեռքերին

Հունիսի 13-ին ոստիկանության Ավանի բաժանմունքում տեղեկություններ ստացվեցին, որ Աճառյան փողոցի էլեկտրասյան մոտ գողացված իրեր կան: Ստացված տեղեկություններն իրացնելով՝ քրեական հետախույզները, համայնքային ոստիկանների հետ նշված հասցեից ոչ հեռու դարանակալեցին ու ...Ռոպեներ անց կասկածյալները, որ երկուսն էին, բերման ենթարկվեցին ոստիկանության Ավանի բաժանմունք:

Մեքենայով մոտեցել էին գողոնը տեղափոխելու, ոստիկաններն էլ բռնել էին:

Երկուսն էլ Աճառյան փողոցից էին, մեկը՝ 37, մյուսը՝ 25 տարեկան: Հետագա միջոցառումներով իրավապահները պարզեցին, որ նրանք տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել են Ծարավ Աղբյուրի փողոցի համակարգչային խաղասրահի դուռը եւ հափշտակել երկու հեռուստացույց, երկու համակարգիչ ու հեռակառավարման հինգ վահանակ:

Գողոնը հայտնաբերվել եւ առգրավվել է: Հանգամանքները պարզվում են: Դեպքի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Դանակահարություն Արմավիրում



Հունիսի 18-ի գիշերը «Արմավիր» բժշկական կենտրոնից ոստիկանության Արմավիրի բաժին հաղորդում ստացվեց, որ հոսպիտալացվել է 55-ամյա մի տղամարդ: Ախտորոշվել էր որովայնի ծակած-թափանցող վերք. տղամարդը դանակահարվել էր:

Ահազանգով հիվանդանոց մեկնած օպերատիվ-քննչական խմբերը հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում պարզեցին կատարվածի մի շարք հանգամանքներ:

Տղամարդը Նալբանդյան գյուղի գերեզմանատան մոտ 41-ամյա համագյուղացու հետ վիճել էր, որն ավարտվել էր դանակահարությամբ: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեցին արնանման հետքեր, դանակ:

Ահազանգից մոտ երկու ժամ անց Արմավիրի ոստիկանները հայտնաբերեցին կասկածյալին ու բերման ենթարկեցին: Նրա դեմքին եւս վնասվածքներ կային, որոնք, իր ասելով՝ ստացել էր գերեզմանների մոտ տեղի ունեցած միջադեպի ժամանակ: Նա եւս տեղափոխվեց Արմավիրի հիվանդանոց եւ անհրաժեշտ բուժօգնություն ստանալուց հետո ձերբակալվեց:

Հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ուրիշի մեքենան

Երեւանաբնակ Մամիկոն Աբրահամյանը «Օպել Աստրա» մակնիշի մեքենա ուներ: Կենցաղային կարիքները հոգալու համար որոշեց մեքենան օրավարձով տալ: Ընտրությունը կանգ առավ Արամ Համբարձումյանի վրա, որն իրեն ներկայացրեց որպես պատասխանատու անձ: Խոստացավ ժամանակին վճարել օրավարձը՝ 5 հազար դրամը, մեքենան վարել սրտացավորեն, որպեսզի շարքից դուրս չգա:

Բանավոր պայմանավորվածությունից հետո Մամիկոնը Արամին վստահեց մեքենան ու բարի ընթացք մաղթեց: Արամը ուրախ էր, որ կարողացել էր շահել մեքենայատիրոջ վստահությունը: Խոսքի տերը լինելով՝ երկու շաբաթ պարտաճանաչ վճարեց: Մամիկոնը գոհ էր, որ հենց նրան էր վստահել մեքենան: Ի դեպ, Մամիկոնը մեքենայում տեղադրված GPS համակարգի միջոցով հետեւում էր մեքենայի տեղաշարժին:

Երկու շաբաթ մեքենան երեւանից դուրս չէր եկել, բայց հետո Մամիկոնը նկատեց, որ Արամը ուղեւորվում է Գյումրի: Անմիջապես զանգեց եւ փորձեց պարզել Գյումրի ուղեւորվելու նպատակը: Արամը հանգիստ ասաց, որ իր սիրելիի հետ գնում է Գյումրի՝ երկու օր ժամանակ անցկացնելու, նաեւ հավելեց, որ վերադառնալուն պես կհանդիպի Մամիկոնին: Սակայն այդ օրից անհասանելի դարձավ:

Մամիկոնը որոշեց ուղեւորվել Գյումրի եւ GPS համակարգի միջոցով գտնել մեքենան: Այդպես էլ արեց: Մեծ եղավ զարմանքը, երբ տեսավ, որ մեքենայից ապամոնտաժվել են գազի բալոնը, փոխանցման տուփը եւ շարժիչը: Նաեւ մեքենան նոր տեր ուներ, որը Մամիկոնին տեղեկացրեց, որ մեքենան Արամից գնել է հազար դոլարով: Ի դեպ, Արամը նրան խոստացել էր երեք օրից բերել նաեւ մեքենայի խոտանման թույլտվությունը: Գնորդն էլ իր հերթին զարմացավ, երբ իմացավ, որ մեքենայի իրական տերը Մամիկոնն է:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Կումայրիի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերը բացատրություններ տվեցին:

Խարդախության փաստով հարուցված քրեական գործով կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Վիճաբանությո՞ւն, թե՞ բանավեճ...

Կան մարդիկ, որոնք նախընտրում են խնդիրները լուծել վիճաբանության միջոցով: Մեկի համար վեճը պարզապես զգացմունքները դուրս մղելու միջոց է, մյուսի համար՝ բնավորության գիծ: Մյուսը վեճի միջոցով փորձում է իր առավելությունն ընդգծել: Որպես կանոն, յուրաքանչյուր վեճի հիմքում որեւէ հին կամ նոր խնդիր կա, չնայած ոստիկանության ամփոփագրերում քիչ չեն նաեւ դեպքերը, երբ վիճաբանության պատճառը կա՛մ չնչին է, կա՛մ էլ գրեթե բացակայում է:

Վիճում են ամեն տեղ՝ տանը, աշխատավայրում, փողոցում, տրանսպորտում, խանութում, անգամ՝ օդանավի մեջ: Բայց երբեմն վեճն ու տգեղ պահվածքը, գռեհիկ տեսարանները շփոթում են բանավեճի հետ: Մինչդեռ դրանք ունեն հստակ տարբերություն: Վեճի հիմնական նպատակը այս կամ այն խնդրին լուծում տալն է, հասկանալը, պարզելը եւ թյուրիմացությունը վերացնելը: Իսկ սկանդալները մի հիմնական նպատակ են հետապնդում՝ վիրավորել մարդուն, զրպարտել, վարկաբեկել:

Ամեն դեպքում խոհեմություն դրսեւորելը գերադասելի է: Հակառակ պարագայում՝ ցանկացած վեճ կարելի է վերածել սկանդալի՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Դժվար է, երբ վեճի ընթացքում հույզերը մթագնում են բանականությունը, առաջնորդում իրենց օրենքներով: Նախընտրելի է, որ յուրաքանչյուրը կարողանա վերահսկել զգացմունքները: Դա առաջին հերթին օգտակար է հենց վիճաբանություն սկսողի համար: Քիչ չեն դեպքերը, երբ վիճաբանություն հրահրողը հայտնվում է մեղադրյալի աթոռին: Հաճախ մոռանում ենք, որ վեճի միջոցով մարդն արտահայտում է իր դժգոհությունը, զայրույթը: Ոմանց համար այդ դժգոհությունը կարող է լուրջ պատճառ ունենալ, ոմանց համար զայրույթի պատճառ կարող է լինել, օրինակ, սեղանին ճիշտ չդրված բաժակը: Նման մանրուքը կարող է փոխադարձ վիրավորանքների եւ մեղադրանքների պատճառ հանդիսանալ:

Ըստ հոգեբանների՝ վիճաբանության ժամանակ հաղթանակը կլինի նրա կողմը, ով տիրապետում է գրագետ վիճելու հմտություններին: Նման դեպքերում կարելի է խուսափել նաեւ անցանկալի հետեւանքներից եւ վիրավորանքներից: Դիմացինին ձեր իրավացիությունն ապացուցելու համար հարկավոր է յուրաքանչյուր խոսք լրջորեն հիմնավորել, քանի որ վիճելիս ամեն մեկը փորձում է ապացուցել, որ ճիշտն ինքն է: Բայց ցանկանալը մի բան է, իսկ իրականությունն՝ այլ: Կարողացեք սթափ գնահատել ստեղծված իրավիճակը: Բոլորն էլ ցանկանում են, որ բանավեճում իրենք հաղթեն: Բայց մի պահ պատկերացրեք, որ դա ընդամենը զգացմունքները դրսեւորելու ցանկություն է: Որքան էլ թեժ լինի վիճաբանությունը՝ պետք է հաշտվելու տեղ թողնել, ինչպես ժողովուրդն է ասում՝ բոլոր կամուրջները այրել հարկավոր չի. հետդարձի փոքրիկ արահետ թողեք:

Խուսափեք վեճի ժամանակ առաջ քաշել տարբեր թեմաներ, իրար խառնել հին ու նոր պատմություններ: Խոսակցությունն սկսեք այն ժամանակ, երբ հակառակորդ կողմը զբաղված չէ այլ գործով, այլապես դա կարող է բացասաբար անդրադառնալ ձեր խոսքի վրա, հնարավոր է՝ զրուցակիցը վատ տրամադրվի ձեր նկատմամբ: Մի շատ կարեւոր պայման եւս՝ խուսափեք կողմնակի մարդկանց ներկայությամբ հարցեր պարզելուց: Չի բացառվում, որ երրորդ անձի ներկայությունը սրի իրավիճակը, քանի որ կողմերից որեւէ մեկը ինքնահաստատվելու խնդիր կունենա: Խուսափեք միաժամանակ խոսելուց: Լսելու կարողություն ունեցեք. լսեք դիմացինին եւ հետո միայն ներկայացրեք ձեր առարկությունները, կարողացեք այնպես անել, որ ձեր խոսքը համոզիչ հնչի: Եթե վստահ եք, որ ճիշտ եք, հստակ, պարզ ներկայացրեք ձեր հիմնավորումները:

Թույլ մի տվեք, որ զայրույթն իշխի բանականությանը: Հարկ եղած դեպքում գնացեք զիջումների. դա ոչ թե թուլության նշան է, այլ իր ուժերի վրա վստահ եւ ուժեղ մարդու հատկանիշ է:

Որքա՜ն անչափահասներ են պահի եւ զայրույթի ազդեցության տակ հատել «չիկարելի»-ի սահմանը եւ դարձել հանցագործ: Անդառնալի հետեւանքներ գրանցվում են հատկապես անչափահասների վիճաբանությունների ժամանակ:

Որոշ մասնագետներ, ինչու չէ՝ նաեւ շատ ծնողներ, այն կարծիքին են, որ հարկավոր չէ միջամտել երեխաների կոնֆլիկտներին, իբր դրանք կոփում են երեխայի բնավորությունը, անչափահասը պետք է սովորի ինքնուրույն հարթել հասակակիցների հետ ունեցած խնդիրները: Գուցե որոշ իրավիճակների համար սա ճիշտ է, բայց կարելի է նաեւ չհամաձայնել: Յուրաքանչյուր անչափահաս յուրովի է ընկալում իր հետ տեղի ունեցածը՝ կախված հոգեբանական առանձնահատկություններից եւ հուզական աշխարհից: Անցումային տարիքում ինքնահաստատվելու ցանկություն ունեն բոլորը: Որոշ դեռահասներ, սակայն, կայացման միջոց են ընտրում ուրիշներին նվաստացնելու, նրանց հետ վիճաբանելու, իրենց առավելությունը ցուցադրելու եղանակը: Չնայած՝ պատահում է, որ նման վարքագիծ դրսեւորում են նաեւ ոչ անչափահասները:

Դիմացինի մեջ մի՛ տեսեք թշնամու եւ մի՛ տրամադրվեք թշնամաբար: Ցանկացած իրավիճակից կարելի է ելք գտնել: Պարզապես հարկավոր է համբերատար լինել: Մի՛ կործանեք ձեր եւ ուրիշի կյանքը, մի՛ դժբախտացրեք ձեր եւ ուրիշ ընտանիքը: Մի՛ ապավինեք դանակի «ընկերությանը»:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Ավարձալի ամփոփագիր

Կռվախնձոր կովը

30-ամյա մի կին հաղորդում է տվել, որ նախկին ամուսինը ժամեր առաջ իրենց գյուղի հանդամասից գողացել է իր կովը՝ պատճառելով մոտ 350 հազար դրամի վնաս:

Ձեռնարկված միջոցառումներով գողոնը հայտնաբերվել է նախկին ամուսնու տան բակում: Նախկինը տվել է խոստովանական բացատրություն:

Գողոնը վերադարձվել է, նախկինը՝ բաց թողնվել:

Անզգույշ մայրը

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ ազդրի ծակած վերքով բուժօգնության է դիմել 4-րդ դասարանցի մի տղա:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ բակում տղան օդամղիչ հրացանից կրակել է թիրախի վրա, ապա լիցքավորված հրացանը տվել է մորը եւ գնացել թիրախն ուսումնասիրելու: Մայրն էլ, չիմանալով, որ հրացանը վերալիցքավորված է, պատահաբար քաշել է ձգանը...

Կրկեսային հնարք՝ տանը

Հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ «ազդրի ծակած-կտրած վերք» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել 36-ամյա մի տղամարդ: Նա հայտնել է, որ վնասվածքը ստացել է բակում ընկնելու հետեւանքով:

Մեկնած ոստիկաններին տղամարդը նոր վարկած է ներկայացրել՝ տանը խոհանոցային դանակով կացնի փայտե կոթը տաշելիս անզգուշաբար ազդրը վնասել է:

Դանակը վերցվել էր, նշանակվել էր դատաբժշկական փորձաքննություն:

Իսկ այդ ընթացքում օպերատիվ տվյալներն իրացնելիս տուժած տղամարդը հրավիրվել է բաժին եւ հաղորդում տվել, որ կնոջ հետ կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ կինն է խոհանոցային դանակը դիտավորյալ նետել իր ուղղությամբ, որը մխրճվել է ազդրի մեջ:

Գուդվին ոստիկանը

Ոստիկանություն է զանգել մի ՍՊԸ տնօրեն եւ հայտնել, որ ՃՈ աշխատակիցը կանգնեցրել է գազալցակայանի աշխատակցին եւ նրանից վերցրել 120 հազար դրամ՝ 300 հազար դրամի ակտ գրելու փոխարեն:

Մեկնած ոստիկաններին տնօրենը հայտնել է, որ աշխատակիցը ճանապարհային ոստիկանին որպես կաշառք տվել է 130 հազար դրամ, որը գազալցակայանի եկամուտն է:

Պարզվել է գազալցակայանի աշխատակցի ինքնությունը: Նա ներկայացել է բաժին եւ տվել բացատրություն, որ ՃՈ որեւէ ծառայող իրենից կաշառք չի վերցրել: Ինքը գազալցակայանում տեղադրված վճարային սարքով կատարել է խաղադրույք եւ պարտվել, իսկ արդարանալու համար տնօրենին հայտնել է կեղծ տեղեկություն:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հունիսի 20-ից 27-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 43 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 1-ը՝ ծեծի, 2-ը՝ կողոպուտի, 3-ը՝ գողության, 1-ը՝ գողությանը հանցակցելու, 4-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 1-ը՝ բանդիտիզմի եւ պաշտոնատար անձի կոչումը կամ իշխանությունն ինքնակամ յուրացնելու, 1-ը՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու, 1-ը՝ խուլիգանության,1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու եւ՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու, 1-ը՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 9 հետախուզվող:

Արձանագրվել է 98 ճանապարհատրանսպորտային պատահար. 5 մարդ զոհվել է, 128-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 27 դեպք. 1 մարդ զոհվել է, իսկ 29-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Հունիսի 24-ին Երեւան-Գյումրի-Բավրա ճանապարհի 34-րդ կմ-ին «ՎԱԶ-2105» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 52-ամյա քաղաքացու եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

■

Հունիսի 24-ին Վանաձորի Մոսկովյան փողոցում «Ֆոլքսվագեն Բորա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 60-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 24-ին «ՎԱԶ-21015» մակնիշի ավտոմեքենան Ախթալա քաղաքի Թումանյան փողոցում դուրս գալով երթեւեկելի մասից՝ ընկել է հեղեղատարը. չորս ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 24-ին Երեւանի Աբեղյան փողոցում «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենան բախվել է էլեկտրասյանը. 46-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 24-ին Երեւանի Ծովակալ Իսակովի պողոտայում «Օպել» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի. «Օպել»-ի 23-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 25-ին Երեւանի Տիգրան Մեծի պողոտայում իրար են բախվել «Ինֆինիտի», «Հունդաի», «Օպել» եւ «Նիսան» եւ կայանված «Մազդա» մակնիշի ավտոմեքենաներ. «Հունդաի»-ի վարորդը եւ երկու քաղաքացիներ մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 25-ին «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենան Արմավիրի մարզի Հայկավան գյուղում դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց եւ բախվել տներից մեկի պարսպին. 30-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 25-ին էջմիածին քաղաքի Մաշտոցի եւ Վ. Սարգսյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «ԲՄՎ» եւ «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենաներ. «Ֆոլքսվագեն»-ի 64-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 25-ին Եղվարդ քաղաքում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 14-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 25-ին Արթիկ քաղաքի Սասունցի Դավթի եւ Թումանյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Տոյոտա Քեմրի» եւ «ԿԻԱ Սեռատո» մակնիշի ավտոմեքենաներ. «ԿԻԱ Սեռատո»-ի 80-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունիսի 25-ին Երեւան-Գյումրի ճանապարհի 58-րդ կմ-ին «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ կողաշրջվել: 29-ամյա վարորդը տեղում մահացել է:

■

Հունիսի 25-ին Կապան քաղաքի Լեռնաձոր գյուղում «ՎԱԶ-21061» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ մոտ 50 մետր գլորվել ձորը. վարորդը եւ 12-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, որտեղ 32-ամյա վարորդը մահացել է:

■

Հունիսի 25-ին «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Նուբարաշեն թաղամասում վրաերթի է ենթարկել 73-ամյա մի քաղաքացուհու, որը տեղում մահացել է:

«Ագրամ-2000»-ի կախարդանքը

Ինքն իրեն անգամ չէր կարող բացատրել, թե ինչի համար էր գնել այդ զենքը, որը տիրոջն իր կամքին ենթարկելով՝ սպասում էր բարենպաստ պահի, որ ազատություն ստանա՝ շուրջը ցավ, սարսափ ու մահ տարածելով:

Դրազենն ստեղծված է սպանելու համար: Նրա մեջ ի սկզբանե չարն է բնակալած, եւ բոլորը չէ, որ կարողանում են դիմակայել չարիքին...

«Երբ ձեռքս էի առնում զենքը, մարմինս լցվում էր ինչ-որ չար էներգիայով ու ինքնավստահության զգացումով: Ես երազում էի գոնե մեկ կրակոց արձակել: Այդ միտքը պարզապես հալածում էր ինձ. հանգիստ չէր տալիս: Ամեն օր այդ մետաղի կտորը հանում էի թաքստոցից, զննում, շոյում, նշան էի բռնում: Ինքս էլ չգիտեմ, թե դա ինչպես կարող էր կատարվել: Այդ պահին ես իմ կամքին չէի ենթարկվում, այլ՝ զենքի»:

Բացատրությունը կցկտուր էր, անտրամաբանական, հստակ ձեւակերպման չէր ենթարկվում, սակայն քննիչը հակված էր հավատալու: Հակառակ դեպքում, ինչպե՞ս բացատրես բարբարոս, անհեթեթ հանցագործությունը, որ կատարել էր ցուցմունք տվող այդ ճզմված, ճնշված, ոչնչացած մարդը:

Նրա անունը Սերգեյ էր՝ Սերգեյ Կ., տարիքը՝ 45: Մշտական աշխատանք չուներ, ժամանակ առ ժամանակ բեռնակրություն էր անում: Ու հարց էր՝ ո՞ւմ կարող էր խանգարած լինել, ումի՞ց էր պաշտպանվելու: Սերգեյը ոչ մի կերպ չէր կարողանում հոդաբաշխ պատասխան տալ այս հարցերին. «Հազիվ թե ես պաշտպանվելու խնդիր կամ անվտանգության հետ կապված տագնապներ ունեցած լինեի: Ավելի շուտ՝ սուր զգացումների պահանջ էի զգում: Կյանքը, հասկանո՞ւմ եք, գորշ է, միօրինակ, տաղտկալի...»:

Սերգեյը որոշել էր, այսպես ասած, բազմազան դարձնել իր միապաղաղ գոյությունը ու զենք էր գնել՝ «Ագրամ-2000», խլացուցիչ ու 22 փամփուշտ...

«Ագրամը» լուրջ զենք է: Այն հատկապես գնահատում են պրոֆեսիոնալ քիլերները: Այդ զենքով են կատարվել մի շարք աղմկահարույց պատվիրված սպանություններ, այդ թվում՝ ՌԴ պետդումայի պատգամավոր Գալինա Ստարովոյտովայի սպանությունը: Ավելացնենք նաեւ, որ այդ «խաղալիքը» բավական թանկ արժե, բայցեւայնպես Սերգեյը գնել էր: Ընդ որում, նա բոլորովին էլ սառնասիրտ պրոֆեսիոնալի տպավորություն չէր թողնում: Մարդասպանի գործողությունները կատարելապես անտրամաբանական էին եւ իմաստազուրկ:

...Այդ օրը խմեցին: Ինքն ու եղբայրը: Շա՛տ խմեցին: Հետո թաքստարանից հանեց «Ագրամը», լիցքավորեց ու դուրս ելավ տնից: Ուզում էր ընդամենը մեկ կրակոց արձակել, որ խաղաղվի ալեկոծված ինքնասիրությունը:

Շուրջը բնակելի տներ էին: Բայց... սեղմեց ձգանը: Սեղմեց ու այլեւս չկարողացավ կանգ առնել, մինչեւ չկրակվեց վերջին փամփուշտը:

Մատն ասես սոսնձված լիներ ձգանին, իսկ ինքնաձիգը շարունակում էր շուրջը կապարե անձրեւ մաղել: Հետո ճիչ լսվեց... Աղջնակը փորը բռնած, ասես դանդաղացրած կինոյում, սահում էր գետնին: Միտքը ծակեց ուղեղը. «Սպանեցի՜»: Սերգեյը սարսափեց ու փախավ փողոցն ի վեր: Նա անցորդներին սպառնալով՝ թափահարում էր ինքնաձիգը: Հետո կանգ առավ, փողը սեղմեց քունքին ու քաշեց ձգանը, բայց կրակոց չհնչեց. փամփուշտները վերջացել էին:

Այդ պահից ի վեր նա այլեւս ոչինչ չէր հիշում: Հետագա իրադարձությունների ընթացքը վերականգնվեց ականատեսների պատմածով:

... Սերգեյը կատարելապես կորցրել էր բանականությունը: Վազում էր փողոցներով, սպառնում անցորդներին: Մի պահի սկսեց հետապնդել չորս անչափահասների՝ բղավելով «Կկոտորեմ բոլոր թմրամոլներին»: Ապա «հրացանի առավ» երկու երիտասարդների ու... ծխելիք պահանջեց:

Նստեց տաքսի, զենքի փողը դեմ արեց վարորդի ճակատին ու հրամայեց. «Քշի՛»: Վարորդը մտովի հրաժեշտ տալով հարազատներին ու համոզված, որ ուղեւորը խելագար է, սլացավ առաջ: Եվ որքան մեծ էր նրա զարմանքը, երբ առաջին իսկ խաչմերուկում խելագար ուղեւորը հրամայեց կանգնեցնել տաքսին ու իջավ...

Առավոտյան, երբ արթնացավ, ուղեղում միայն գլխացավն էր ու նախորդ օրվա սարսափելի պատկերները, իսկ կողքին ինքնաձիգն էր՝ պարպված, առանց փամփուշտների, բայց առաջվա պես ահեղ ու մահացու: Սերգեյը զանգեց ծանոթ ավտոտեսուչին ու խնդրեց օգնել մեղայականով ներկայանալու հարցում:

...Տասնչորսամյա Աննան, հրազենային ծանր վնասվածքներից, առանց գիտակցության գալու, մահացավ հիվանդանոցում: Նրա մայրը ծանր հիվանդացավ. չկարողացավ դիմանալ միակ դստեր կորստյան ցավին:

Կատարվածը որակվեց որպես սպանություն՝ խուլիգանական դրդումներով: Հանցագործության իրական դրդապատճառները նկարագրության չէին տրվում: Քրեական օրենսգիրքը չի ներառում այն հոգեվիճակը, որի մեջ գտնվել էր մարդասպանը. ուստի իրավաբաններն ստիպված էին տեղավորվել ընդունված օրենքների շրջանակներում:

Հավելենք, որ մեղայականով ներկայանալը նույնպես չթեթեւացրեց Սերգեյ Կ.-ի պատիժը. «Ագրան-2000»-ն ու 22 փամփուշտները նրան 22 տարվա ազատազրկում արժեցան՝ խիստ ռեժիմի գաղութում...

Միլիարդատեր գնդապետը. պայքար կոռուպցիայի դեմ

Հունիսի 10-ին Մոսկվայի Պրեսենսկյան շրջանային դատարանում սկսվեց գնդապետ Դմիտրի Զախարչենկոյի դատավճռի հայտարարումը: Նախկին բարձրաստիճան պաշտոնյան մեղադրվում է խոշոր չափի կաշառք ստանալու մեջ: Նրա քրոջ բնակարանում հայտնաբերված գումարը հավասարազոր էր մարզային կենտրոնի տարեկան բյուջեին: Նախկին ոստիկանը հերքում է մեղադրանքը՝ հայտարարելով, որ դրանք կեղծ են:



Գնդապետ Դմիտրի Զախարչենկոն, որ Ռուսաստանի ՆԳ նախարարության տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման գլխավոր վարչության պետի տեղակալն էր, ձերբակալվեց 2016-ի սեպտեմբերին: Անվտանգության ծառայության աշխատակիցները խուզարկության ժամանակ նրա քրոջ բնակարանում հայտնաբերեցին տարադրամներով լի տասնյակ պայուսակներ ու արկղ: Փողը հաշվելու համար պահանջվում էր մի քանի օր: Այն 9 միլիարդ ռուբլի էր: Միլիարդատեր գնդապետը չկարողացավ պարզաբանել, թե որտեղից է այդքան փողը եւ ձերբակալվեց:

Հետաքննությամբ պարզվեց, որ դեռեւս 2014 թ. գնդապետ Զախարչենկոն նախաձեռնում է «Լյա Մարե» ռեստորանային ցանցի ստուգում, որի ընթացքում հայտնաբերվում են մի շարք չարաշահումներ: Տնօրենից պահանջում են 5 միլիոն դոլար կաշառք, սակայն տնօրենը տալիս է միայն 800 հազար դոլար: Այդ դրվագի վկա է Զախարչենկոյի գործընկեր, ՆԳ նախկին գեներալ Ալեքսեյ Լաուշկինը: Նա հետաքննությանը հայտնել է, որ ոստիկանը կաշառքը հանձնում է Դաշնային անվտանգության ծառայության գնդապետ Դմիտրի Սենինին, որը տեղեկանալով գործընկերոջ ձերբակալության մասին՝ շտապում է անհետանալ, եւ այժմ հետախուզման մեջ է:

Զախարչենկոյի հաջորդ «գործը» կապված է «Նոտա Բանկ»-ի հետ: Քննիչները ենթադրում են, որ «ոսկյա գնդապետը» բանկի ղեկավարությանը նախազգուշացրել էր նախատեսվող խուզարկության մասին՝ միաժամանակ կազմակերպելով փաստաթղթերի ու տեխնիկայի դուրս բերումը, ինչը, սակայն, բանկիրներին չփրկեց քրեական պատասխանատվությունից:

Դմիտրի Զախարչենկոն ծնվել է Ռոստովի մարզի Միլերովսկյան շրջանում: Ավարտել է Յուսիս-կովկասյան պետական ծառայության ակադեմիան: Այնուհետեւ ստացել է եւս երկու բարձրագույն կրթություն՝ տնտեսական ու իրավաբանական:

Ծառայության է անցել հարկային ոստիկանությունում, իսկ մի քանի տարի անց՝ Ռուսաստանի ՆԳ նախարարության տնտեսական անվտանգության դեպարտամենտում, որը հետագայում վերանվանվեց տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման գլխավոր վարչություն:

Զախարչենկոն պայքարում էր վառելանյութի համալիրում կատարվող հանցագործությունների դեմ: 38 տարեկանում արդեն գնդապետ էր եւ «Տ» վարչության պետի տեղակալը, պայքարում ու հսկում էր վառելանյութի համակարգը:

Ծառայությունը զուգակցում էր գեղեցիկ կյանքի հետ. սիրում էր լավ ուտել ու հանգստանալ արտասահմանում: Միայն ԱՄՆ-ում նա վատնել էր 340 հազար դոլար, իսկ 2012 թ. նոյեմբերին նրա կինը Դուբայում ծախսել էր 19 հազար դոլար: 2007-ից մինչեւ 2014 թ. ամուսինները այցելել էին Ավստրիա, Գերմանիա, Եգիպտոս, Շվեյցարիա, Իսրայել, Իսպանիա եւ ԱՄՆ: Խուզարկության ժամանակ հայտնաբերվեց նրա, այսպես կոչված՝ հաշվապահությունը, որտեղ 600 հազար եվրոյի դիմաց արված էր «մանրուք» նշումը:

Զախարչենկոյի քրոջ բնակարանից հայտնաբերվեց 9 միլիարդ ռուբլի: Նախաքննության ընթացքում հայտնաբերվեցին նաեւ 23 բնակարան, մեքենաների կայանատեղի, մի քանի թանկարժեք մեքենաներ, որոնք, դատարանի որոշմամբ, պետականացվեցին: Գնդապետի ընտանիքը փորձեց վիճարկել որոշումը, բայց՝ ապարդյուն:

Քրեական պատասխանատվության ենթարկվեց նաեւ Զախարչենկոյի հայրը, որը մեղադրվեց կեղծ աշխատանքի տեղավորման ու մոսկովյան բանկերից մեկի գումարները ծախսելու մեջ: Նա դատապարտվեց 4 տարվա բանտարկության:

Երեք տարվա բանտարկության դատապարտվեց «Նոտա Բանկ»-ի ֆինանսական տնօրեն Գալինա Մարչուկովան, նրա քույր Լարիսան՝ 350 միլիոն ռուբլի մսխելու համար: Նրանք համաձայնության եկան հետաքննության հետ եւ տվեցին գնդապետ Զախարչենկոյին մերկացնող ցուցմունքներ: Բացի այդ, Լարիսան օգնեց հետաքննությանը բացահայտել «Նոտա Բանկ»-ից եւս 25 միլիարդ ռուբլու հափշտակումը: Բանկի համատնօրենները դատապարտվեցին 8,5 տարվա բանտարկության:

Պետական մեղադրողը խնդրեց Զախարչենկոյին դատապարտել 15,5 տարվա բանտարկության եւ նշանակել 494,9 միլիոն ռուբլի տուգանք: Նախկին գնդապետը այդպես էլ չընդունեց իր մեղքը: Նրա ելույթը դատարանում տեւեց ընդհանուր առմամբ՝ 31 ժամ՝ գրեթե 4 օր, ինչը, սակայն, ոչինչ չփոխեց:

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը

Ոստիկանության թափանցիկ եւ հրապարակային գործունեության շրջանակներում, երբ խոսքը վերաբերում է ոստիկանի կողմից լրագրողներին որեւէ գործի հանգամանքների հետ կապված տեղեկատվության տրամադրմանը, հատկապես, երբ տվյալ գործն ունի հասարակական հնչողություն, հաճախ որոշակի տեղեկություններ պարզապես չեն տրամադրվում լրագրողներին՝ այն հիմնավորմամբ, որ դրանք տվյալ անձի անձնական կամ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություն են:

Անձնական եւ ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը սահմանված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայով: Մասնավորապես, Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը: Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով»:

Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական եւ ընտանեկան կյանքի, բնակարանի եւ նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք: Չի թույլատրվում միջամտություն այդ իրավունքի իրականացմանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»: Անհրաժեշտ է տարանջատել եւ լրագրողին տրամադրել տվյալ գործին առնչվող անձանց վերաբերող այնպիսի տեղեկություններ, որոնք կամ չեն հանդիսանում նրա անձնական կամ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություններ, կա՛մ այդպիսի տեղեկությունների տրամադրումը նախատեսված է օրենքով եւ անհրաժեշտ է հասարակության անվտանգությունն ապահովելու համար, կա՛մ պարզապես բխում է հասարակության շահերից: Այս նորմերի ձեւակերպումից բխում են «ընտանեկան գաղտնիք» եւ «անձնական գաղտնիք» հասկացությունները, որոնց իրավական հստակ բնորոշումները եւ դրանց որակական յուրահատկությունները սահմանված չեն որեւէ իրավական ակտում:

ՀՀ գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ընտանիքը, որպես ինքնուրույն միավոր, օժտված չէ իրավասուբյեկտիվությամբ: Իրավունքների եւ պարտականությունների կրող հանդես է գալիս ոչ թե «ընտանիք» միավորը, այլ նրա առանձին անդամը: Ընտանիքը չի կարող դառնալ քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտ, հայցով դիմել դատարան կամ ենթարկվել կոլեկտիվ

պատասխանատվության:

Այդուհանդերձ, մասնավոր կյանքը կազմում է մարդու անձնական կյանքի այն հատվածը, որին մարդը չի ցանկանում հաղորդակից դարձնել ուրիշներին եւ որն անձեռնմխելի է շրջապատի համար: Տվյալ դեպքում գաղտնիություն ասվածի տակ ամենեւին չի թաքցվում որեւէ հակահասարակական գործունեություն: Այն արտացոլում է յուրաքանչյուր անհատի բնական ձգտումը՝ ունենալու իր ինտիմ եւ գործարար հետաքրքրությունների անձնական աշխարհը, որը պետք է պաշտպանված լինի ուրիշների անհարկի միջամտությունից:

Մարդու անձնական կյանքի իրավունքը յուրաքանչյուր անհատի արտահայտման եւ անհատականության պաշտպանության իրավունքն է: Բայցեւայնպես, մասնավոր կյանքի մասին սահմանումներն ու դատողություններն ի զորու չեն համակողմանի որոշել մարդու մասնավոր կյանքի շրջանակները:

Երբեմն որոշ անհատներ իրենց անձնական կյանքի գաղտնիության իրավունքի պաշտպանությունն ընկալում են ծայրահեղ ձեւով եւ դրա շղարշի տակ թույլ են տալիս որոշակի չարաշահումներ՝ միաժամանակ պահանջելով մյուսներից հարգել իրենց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը: Այս դեպքում, բնականաբար, կարող է ծագել պետության կողմից անձի մասնավոր կյանքին միջամտության անհրաժեշտություն՝ ելնելով հասարակության շահերից: Նման դեպքերում պետությունը պետք է հիմնավորի, որ քաղաքացու մասնավոր կյանքին միջամտելն իրականացվում է բացառապես օրենքի հիման վրա՝ հանցագործությունը բացահայտելու նպատակով: Իսկ օրենքը սահմանում է, որ նման միջամտության համար անհրաժեշտ է, որպեսզի այդ առթիվ հարուցված լինի քրեական գործ եւ անձի մեղքը հիմնավորված լինի: Մյուս բոլոր դեպքերում մարդու անձնական կյանքն անձեռնմխելի է:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի վերլուծության համատեքստում կարեւոր է անդրադառնալ նաեւ հանրային ծառայողի մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման առանձնահատկություններին:

Հանրային ծառայողներն իրենց գործունեությամբ եւ վարքագծի տարբեր դրսեւորումներով գտնվում են հանրության ուշադրության կենտրոնում, եւ նրանց անձնական եւ ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկություններով հասարակությունն ավելի շատ է հետաքրքրված: Մինչդեռ այն հանգամանքը, որ անձը զբաղեցնում է հանրային պաշտոն, չի զրկում նրան անձնական կյանք ունենալու իրավունքից: Ինչպես ցանկացած անհատ, հանրային ծառայողը եւս հանդիսանում է հասարակության լիիրավ անդամ, օգտվում է իր կյանքն ու կենցաղն իրավաչափ եւ ազատ տնօրինելու իրավունքից, ունի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք:

Սակայն խնդիրն այն է, որ հանրային ծառայողը օժտված լինելով որոշակի լիազորություններով, որոնց իրականացումն ամեն դեպքում ուղղված է հասարակության շահերի պաշտպանությանը, կրում է որոշակի պարտավորություններ նույն հասարակության առջեւ: Հանրային պաշտոն զբաղեցնելով՝ անձը պարտավորվում է ենթարկվել տվյալ պաշտոնի համար օրենսդրությամբ սահմանված էթիկայի կանոններին, որոնք, լինելով վարքագծի կանոններ, ըստ էության հանդիսանում են սահմանափակումներ հանրային ծառայողի անձնական կյանքն ազատ «տնօրինելու» առումով: Ուստի կարելի է ասել, որ հանրային ծառայողի մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հասարակության պահանջը կարելի է դիտարկել որպես հանրային ծառայողի նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացման ձեւ:

Երբ սերը սեր չէր...

Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնում հնչած ահազանգը ավազակության փաստով էր. երիտասարդ աղջիկը հայտնում էր, որ ծանոթը դանակի սպառնալիքով փող է պահանջել իրենից, ապա ծեծի ենթարկել ու դիմել փախուստի:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումների արդյունքում պարզվեցին դեպքի հանգամանքները, փախստականը հայտնաբերվեց եւ խոստովանական ցուցմունք տվեց՝ քրեական օրենսգրքի 175 հոդվածով առաջադրված մեղադրանքն ընդունելով լիովին:

Գոռ Մինասյանը քսանչորս տարեկան է, թերի բարձրագույն կրթությամբ: Բուհն ավարտել չի հասցրել, փոխարենը՝ հասցրել է դատապարտվել: Օրենքի հետ երկրորդ հանդիպումն ավելի ծանր հանցագործության համար է, ու պատիժն ավելի ծանր է լինելու:

Տուժողի՝ Լուսինեի հետ մեկ ամսվա ծանոթներ էին. պարզապես ժամանցի համար սիրահետեց աղջկան:

Մարդուն լավ ճանաչելու համար հետը մի փութ աղ պիտի ուտես՝ ասում է ժողովրդական խոսքը. դրան Լուսինեն անտեղյակ էր: Սիրահարվեց ու ինքն իրեն արգելեց քննադատել սիրած տղայի արարքները, այն, որ նա իրենից պարտքով փող էր վերցնում, իսկ հետո դժվարությամբ վերադարձնում: Մի անգամ, օրինակ, հիսուն հազար դրամ պարտք տվեց: Մեկ շաբաթ հետո Գոռը պարտքը վերադարձրեց, իսկ հաջորդ օրը քսան հազար դրամ ուզեց մեկ օրով:

Օրերն անցնում էին, բայց պարտքը չէր վերադարձնում: Լուսինեն համառորեն պահանջեց քսան հազար դրամը, Գոռը համառորեն հրաժարվեց վերադարձնել: Փողի պահանջը ստիպեց, որ նորից պարտք վերցնի Լուսինեից: Զանգեց ու երեկոյան ընկերոջ հետ գնաց նրանց տուն: Պարտքով հարյուր հազար դրամ ուզեց: Լուսինեն արդեն խելքի էր եկել. մերժեց: Գոռն էլ զայրացավ, հանեց դանակն ու գոռաց՝ «Փող տուր, թե չէ կսպանեմ...»:

Ունենար՝ գուցեեւ վախից տար հարյուր հազարը: Չուներ: Բայց Գոռը նահանջողը չէր: Նախ գլխով հարվածեց աղջկա գլխին, ապա ոտքերի ուժը ցույց տվեց: Հետո ձեռքը ոլորելով՝ քարշ տվեց ննջասենյակ: Սկսեց քանդել դարակները, բայց փողի փնտրտուքն ապարդյուն էր: Տանը փող իսկապես չկար:

Գազազած՝ դանակի կոթով սկսեց հարվածներ հասցնել աղջկա գլխին: Ի վերջո, ընկերոջը հաջողվեց հանդարտեցնել Գոռին. համոզելով հեռացրեց Լուսինեից ու տնից:

Նրանց հեռանալուց հետո սարսափահար աղջիկը զանգեց ոստիկանություն. վախեցել էր, որ Գոռը կվերադառնա...

Չվերադարձավ: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ օրեր անց հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանություն:

Քրեական օրենսգրքի 175 հոդվածով հարուցված քրեական գործի նախաքննությունն ավարտվել է եւ ուղարկվել դատարան:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

www.police.am

Խուլիգանություն Մասիսում

Հունիսի 20-ին Մասիս քաղաքի 3-րդ փողոցում մի ոստիկան նկատել է երթեւեկող «Մերսեդես 8-180» մակնիշի ավտոմեքենա, որի մեջ նստած երեք երիտասարդ բարձրաձայն հայհոյել են, կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը, այնուհետեւ անցնելով ոստիկանության Մասիսի բաժնի ուղեփակոցի մոտով՝ մեքենան անկանոն վարել են դեպի 4-րդ փողոցի ուղղությամբ՝ կրկին հնչեցնելով հայհոյանքներ:

Ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները հետապնդելով ավտոմեքենան՝ Մասիս քաղաքի 4-րդ փողոցի սուպերմարկետի մոտից, ավտոմեքենայով հանդերձ, բերման են ենթարկել երեք երիտասարդներին:

Նախապատրաստվում են նյութեր:

Արտաշատի ոստիկանների բացահայտումը

Հունիսի 20-ին ոստիկանության Արտաշատի բաժնի ծառայողները Շահումյան գյուղից, գողություն կատարելու կասկածանքով, բերման են ենթարկել նույն գյուղի 61-ամյա բնակչի:

Պարզվել է, որ նա հունիսի 16-ին, օգտվելով Երեւան-Երասխ ճանապարհի՝ Շահումյան գյուղի հատվածում գտնվող վագոնտնակի դուռը բաց լինելու հանգամանքից, գողացել է հատակի տախտակները:

Նախապատրաստվում են նյութեր:

Տարոնի ոստիկանների բացահայտումը

Հունիսի 21-ին մի ուսանող հաղորդում է տվել, որ նախորդ օրը Վանաձորի Երկաթուղայինների այգու սկզբնամասում իրեն է մոտեցել մի երիտասարդ, ներկայացել Ալավերդու բնակիչ Արեն եւ զանգելու նպատակով իրենից խնդրել է բջջային հեռախոսը: Սակայն, օգտվելով իր անուշադրությունից, հափշտակել է հեռախոսը:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Տարոնի քրեական հետախույզները, խարդախություն կատարելու կասկածանքով, բաժին են հրավիրել Հագվի գյուղի բնակիչ, 26-ամյա մի երիտասարդի: Խոստովանելով արարքը՝ երիտասարդը հայտնել է, որ հափշտակած հեռախոսը նետել է գետը:

Նախապատրաստվում են նյութեր:

Մալաթիայի ոստիկանների բացահայտումը

Հունիսի 20-ին ոստիկանություն է զանգել 26-ամյա մի կին եւ հայտնել, որ Սեբաստիայի փողոցում կայանված իր «Տոյոտա»-ի ապակին կոտրել ու սրահից գողացել են պայուսակը, որի մեջ եղել է իր դրամապանակ, 60 հազար դրամ, բանկային քարտեր եւ բջջային հեռախոսի լիցքավորող սարք:

Ոստիկանության Մալաթիայի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողությունը կատարել է 30-ամյա մի տղամարդ: Պարզվել է նաեւ, որ նա բանկոմատից փորձել է գողացված բանկային քարտով փող կանխիկացնել:

Ձեռնարկվում են միջոցառումներ կասկածյալին հայտնաբերելու ուղղությամբ:

Դանակահարությունը բացահայտվեց

Մայիսի 30-ին հիվանդանոցից ոստիկանություն հաղորդում էր ստացվել, որ «շտապօգնության» խումբը կրծքավանդակի ծակած-կտրած վերքով Կոմիտասի պողոտայից բուժօգնության է տեղափոխել մի երիտասարդի, որն ի վիճակի չէր բացատրություն տալու:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզները ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզեցին վնասվածքը պատճառողի ինքնությունը: Լենինգրադյան փողոցի 32-ամյա բնակիչը հունիսի 18-ին բերման ենթարկվեց եւ ներկայացվեց Արաբկիրի քննչական բաժին:

Կատարվում է նախաքննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐ.

ծանր թեմա

Հունիսի 26-ը խոշտանգումների զոհերի աջակցության միջազգային օրն է: Այն ստեղծվել է կյանքի կոչելու ՄԱԿ-ի նպատակը՝ վերացնել խոշտանգումները եւ հասնել այն բանին, որ արդյունավետ իրագործվի 1987 թ. ուժի մեջ մտած «Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի դեմ» կոնվենցիան:

Կրծքավանդակի կտրած-ծակած վերք, գլխի ճակատային եւ գագաթային շրջանի սալջարդ, ուղեղի ցնցում, ծնկահոդի սալջարդ, կրծքավանդակի բութ տրավմա նախնական ախտորոշումներով հիվանդանոց տեղափոխված կնոջը մարմնական վնասվածքները պատճառել էր ամուսինը՝ Գեղամ Սմբատյանը: Հիվանդանոց մեկնած ոստիկանության աշխատակիցներին կինը հայտնեց, որ կենցաղային հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ ամուսինը դաժան ծեծի է ենթարկել իրեն եւ դանակով վնասվածքներ պատճառել:

Գեղամ Սմբատյանը բերման ենթարկվեց ոստիկանություն: Նրան մեղադրանք առաջադրվեց:

Հայաստանում կա՞ ներընտանեկան բռնությունների հիմնախնդիր, եւ ի՞նչն է բռնությունների հիմնական պատճառը:

Հիմնախնդիր, այո՛, կա, եւ վերջին շրջանում կատարված ուսումնասիրությունները ու գրանցված ահազանգերը փաստում են, որ բռնության դեպքերն աճում են, իսկ ագրեսիայի թիրախը գլխավորապես կանայք են. սա՝ ոլորտի մասնագետների կարծիքով: Ըստ հոգեբանի՝ կնոջ նկատմամբ բռնությունների պատճառ կարող է լինել տղամարդու թերարժեքության, հոգեբանական տարբեր բարդույթներով տառապելու, ինքնահաստատված չլինելու հանգամանքը: Շատ դեպքերում գործազուրկ, ընտանիքի հոգսը լուծել չկարողացող տղամարդը կնոջ կշտամբանքներից պաշտպանվելու մղումից է դիմում բռնության: Ընդհանրապես, ինքնավստահությունից զուրկ, ցածր ինքնագնահատական ունեցող, սեփական թուլությունից վախեցող տղամարդն է ձեռք բարձրացնում կնոջ վրա:

Հոգեբանները նշում են կնոջ նկատմամբ բռնության մի քանի ձեւ՝ ծեծ, խոսքային ագրեսիա, անհիմն խանդի դրսեւորումներ, կնոջը կարեւոր շփումներից զրկելը եւ այլն:

Ներընտանեկան բռնության գլխավոր պատճառներից մեկն էլ հոգեբանները համարում են ամուսնու անհավատարմությունը: Ըստ նրանց՝ հարցման ենթարկված կանանց մեծ մասի համար դավաճանությունն ամենածանր հարվածն է. կինն ընկնում է սթրեսի մեջ, խախտվում է հոգեվիճակը, եւ նա դառնում է կոնֆլիկտային, ինչը կարող է ամուսնու կողմից բռնության ենթարկվելու պատճառ դառնալ:

Հոգեբանները նշում են մի կարեւոր հանգամանք եւս՝ տղամարդիկ հաճախ իրենց ագրեսիվ վերաբերմունքն ամենեւին էլ որպես բռնություն չեն ընկալում: Տղամարդը կարող է հայհոյել կնոջը, ծեծել, նվաստացնել, միեւնույն ժամանակ, արդարանալ՝ ի՞նչ եմ արել որ:

Իսկ ընտանեկան բռնությունների նվազեցման հիմնական ուղիներից մեկը, ըստ հոգեբանների, պատժելիությունն է, բռնարարքի համար պատասխանատվության ենթարկելը:

Դասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

«Գողական տղա»

Սեւակ Պետրոսյանը, ըստ մեղադրանքի, հետաքրքրվել է «գողականների» կյանքով, դիտել է նրանց կյանքի ու արարքների մասին ֆիլմեր: Բացասական վերաբերմունք է ունեցել ոստիկանների նկատմամբ, ալկոհոլ օգտագործած վիճակում հաճախ ցանկություն է հայտնել վնասելու նրանց՝ անկախ նրանց ճանաչելու կամ՝ ով լինելու հանգամանքից»:

«Գողական» կեղծ ու վտանգավոր պատկերացումներով տարված Սեւակ Պետրոսյանը, ըստ մեղադրանքի, 2017 թ. հունիսի 8-ին մասնակցել է բանակից արձակուրդ եկած համադասարանցու տանը կազմակերպված խնջույքին, ապա գնացել տուն:

Գիշերվա ժամը 5-ի սահմաններում Սեւակը զանգել է տաքսու ծանոթ վարորդ Հովհաննեսին, խնդրել է իրեն ինչ-որ տեղ տանել: Հովհաննեսն ասել է, թե մեքենայի վրա գործ է անում, Սեւակին կանչել է իրենց շենքի մոտ: Սեւակը Հովհաննեսի մեքենայով քիչ անց վերադարձել է բանակից արձակուրդ եկած համադասարանցու՝ Թոռնիկի տան մոտ, զանգել է նրան եւ դուրս է կանչել: Ասել է, թե մեկը կա՝ հետը ուզում է խոսել, մենակ չի ուզում գնալ: Թոռնիկը դուրս է եկել, նստել է Հովհաննեսի մեքենան: Շարժվել են դեպի Արմավիր քաղաքի Հանրապետության եւ Մյասնիկյան փողոցների խաչմերուկ: Մեքենայի մեջ Սեւակը գարեջուր է խմել եւ խոսել է «գողական տղա դառնալու» իր մեծ ցանկության մասին, ասել է, թե ոստիկան պիտի խփի, որ գնա, «գողականին վայել» նստի: Թոռնիկն ու Հովհաննեսը խորհուրդ են տվել նման բան չանել, որ չդատապարտվի:

Սեւակը պահանջել է, որ Հովհաննեսը մեքենան վարի Մյասնիկյան փողոցով, որը տանում էր դեպի Արմավիրի ոստիկանություն: Մեքենան Սեւակի պահանջով կանգնել է, Սեւակն ու Թոռնիկն իջել են մեքենայից, քայլել «ՎՏԲ-Հայաստան» բանկի ուղղությամբ: Սեւակը նորից շարունակել է մեքենայում ծավալած խոսակցությունը, գոտկատեղից հանել ու ցույց է տվել դանակը: Թոռնիկը համոզել է, որ հետ կանգնի սխալ մտադրություններից: Սեւակը հակաճառել է, Թոռնիկը նրան թողել ու նորից նստել է Հովհաննեսի մեքենան, ու հեռացել են:

Ժամը 6.10-ին Սեւակ Պետրոսյանը թակել է ոստիկանության բաժնի մուտքի դուռը: Հերթապահի օգնական Ռաֆիկ Գոլովորյանը փորձել է ճշտել, թե ով է թակում դուռը: Սեւակը ձեւացրել է, թե իրեն վատ է զգում, խնդրել է դուռը բացել եւ օգնել: Ոստիկանը բացել է դուռը, բայց Սեւակ Պետրոսյանը դանակով անմիջապես խփել է նրա որովայնին՝ նրա առողջությանը պատճառելով ծանր վնաս: Այնուհետեւ Սեւակը փորձել է եւս մի հարված հասցնել, բայց բաժնի մուտքի մոտ ծառայություն կատարող Վահրամ Մանուկյանը վրա է հասել, զենքի խզակոթով խփել է Սեւակին ու խափանել նրա գործողությունները, ինչից հետո Վահրամ Մանուկյանն ու տուժող Ռաֆիկ Գոլովորյանը վնասազերծել են Սեւակ Պետրոսյանին:

Նախաքննության ընթացքում Սեւակ Պետրոսյանն իրեն մեղավոր չի ճանաչել ու ցուցմունք չի տվել: Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում Սեւակ Պետրոսյանն իրեն մասնակի մեղավոր է ճանաչել այն բանի համար, որ դանակով խփել է տուժողին, բայց սպանելու մտադրություն չի ունեցել: Նշել է, թե դեպքի օրը խմած է եղել, միայն ցանկացել է «վնասել» ոստիկանին:

Դատարանը Սեւակ Պետրոսյանին մեղավոր է ճանաչել ոստիկանին սպանելու փորձի համար եւ դատապարտել է ազատազրկման 12 տարի ժամանակով:

Գոհար ՔԱԼԱՇՅԱՆ

Ոստիկանները դրամանենգություն են բացահայտել

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության եւ Արաբկիրի բաժնի ծառայողները, ձեռնարկելով օպերատիվ-հետախուզական ծավալուն միջոցառումներ, տեղեկություններ էին ստացել, որ Երեւանի բնակիչ, 42-ամյա եւ Արմավիրի մարզի Երասխահուն գյուղում ապրող 34-ամյա տղամարդիկ կեղծ փողեր են պատրաստում եւ իրացնում: Նրանք վերցվեցին օպերատիվ տեսադաշտ: Տեղեկությունների իսկությունը պարզելու միջոցառումներին միացան ոստիկանության օպերատիվ ծառայությունների աշխատակիցներ, կազմակերպվեցին դարանակալումներ եւ օպերատիվ նկարահանումներ: Քրեական հետախույզները քողարկված հետեւեցին նրանց շարժին:

Միրգ գնող տղամարդը վաճառողին տալիս է ակնհայտ կեղծ 5000-անոց, ինչից հետո վաճառողը սկսում է հետապնդել նրան, բայց ոչ շատ երկար: Դարանակալած ոստիկանները տղամարդուն բռնում են ու կեղծ թղթադրամ իրացնելու կասկածանքով բերման ենթարկում ոստիկանության Կենտրոնական բաժին:

Բերման ենթարկվածի խուզարկությամբ հայտնաբերվեց 5000 դրամ անվանական արժեքով 9 հատ կեղծ թղթադրամ: Հետագա միջոցառումներով ոստիկանները պարզեցին, որ նա կեղծ փողը անվանական արժեքից էժան գնել է Երասխահուն գյուղի 35-ամյա մի բնակչից: Տեղեկությունը փոխանցվեց ոստիկանության Արմավիրի բաժին: Ոստիկանների օպերատիվ տեսադաշտում հայտնված մյուս անձն էլ հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց:

Հարուցվեց քրեական գործ, որի շրջանակներում խուզարկություններ կատարվեցին նրանց բնակարաններում: Հայտնաբերվեցին տպելու սարքեր եւ հատուկ թղթեր:

Հանգամանքները քննությամբ պարզվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Արշավիր ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կյանքից հեռացավ ոստիկանության պաշտոնաթող փոխգնդապետ Արշավիր Վարդանյանը:

Ծնվել է 1948 թ., Նախիջեւանի Արինջ գյուղում:

Զինված ուժերում ծառայությունից հետո՝ 1971 թ., ընդունվել է ներքին գործերի համակարգ: Միլիցիոներ, ավագ տեսուչ, հատուկ պարեկատան պետ, դասակի հրամանատար, բաժանմունքի պետ, բաժնի պետի տեղակալ՝ ծառայության երեք տասնյակից ավելի տարիների անցած ճանապարհն է: Բարեխիղճ, պատասխանատու, սկզբունքային սպայի անցած ճանապարհը:

Արշավիր Վարդանյանի հիշատակը միշտ կմնա նրան ճանաչողների սրտերում:

Ստեփան ՀԱԿՈԲՅԱՆ

Կյանքից հեռացավ ոստիկանության պաշտոնաթող մայոր Ստեփան Հակոբյանը:

Ծնվել է 1931 թ., Սիսիանի շրջանի Բորիսովկա գյուղում:

1951-1954 թթ. բանակում ծառայելուց հետո որոշ ժամանակ Բորիսովկայի կոլտնտեսության հաշվետարն էր: 1959 թ. ընդունվել է ներքին գործերի համակարգ՝ ծառայության անցելով Սիսիանի ՆԳ բաժնում: Եղել է տեղամասային տեսուչ, անձնագրային բաժանմունքի պետ, արտագերատեսչական պահպանության բաժնի պետ:

Վաստակած հանգստի է անցել 1986 թվականին:

Ստեփան Հակոբյանի հիշատակը միշտ կմնա նրան ճանաչողների սրտերում:

Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ

Գողությունները բացահայտվեցին

Հունիսի 8-ին ոստիկանություն ահազանգած քաղաքացուհին հայտնել էր, որ Աշտարակի Վարդգես Պետրոսյան փողոցի դեղատներից մեկից գողացել են իր բջջային հեռախոսը:

Ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողներն իրականացրին անհրաժեշտ գործողություններ՝ գողությունը բացահայտելու համար: Ահազանգից մոտ մեկ ժամ անց, գողության կասկածանքով, բերման ենթարկվեց Կապանի 56-ամյա մի բնակիչ: Նրա մոտից հայտնաբերվեց մեկ շիշ օղի եւ բջջային հեռախոս: Ըստ կասկածյալի՝ օղին գողացել էր Աշտարակի խանութներից մեկից, իսկ բջջային հեռախոսը՝ դեղատնից:

Նյութերի նախապատրաստման ընթացքում կասկածյալը խոստովանեց այլ հանցարարքներ եւս. օղի էր գողացել նաեւ Աշտարակի մեկ այլ խանութից, բջջային հեռախոսների նորոգման սրահից՝ բջջային հեռախոս, իսկ դեղատնից՝ ակնոցներ:

Կատարվում է քննություն:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:



Ժորժ Վելիկոլեպնի
Շան տեսակ / Թռչուն
Հույն բանաստեղծ / Կիթառի մաս
Պնակաձեւ աման / ... ծոր
«Արտաշես եւ ...»
Գումարում / Երկյուղ
Պարանոց / Մարզական զենք
Ճապոնացի գրող / Դողդոջուն բարդի
Արշալույսից առաջ / Անգլ. գրող
Նոյի ավագ որդին
Ընտանի կենդանի
Վերահսկող պաշտոնյա
Ուսումն. պարապմունք
Քաղաք, Կիպրոս
Ֆրանս. մաթեմատիկոս / Բուք ու ...
«... ընկուզենին» / Քար / Հարդանոց
Հռոմեացի կայսր
Բարաք ... / Ջրի կավե խողովակ
Այրարատ նահանգում բնակված ցեղ
Քաղաք, Գանա / Կրակ
Գ / Վիլյամ ...
Լեոնել ... / Կանաչեղեն
«... եւ Վարդիթեր» / Հովանավոր
Հին հարկատեսակ / Սենեգալ
Ավազամրրիկ
Աշխարհաբար
Իսպան. գինի
Որոգայթ / Առասպել. գուշակուհի
Հայկական ճաշ
Ուրարտուի արքա / Եթերայուղատու բույս
«Գնչուական մեղեդիներ» / Նախկին Ալավերդին
«Ասկանիո» / Կալվածք
Սթիվեն Սիգալ
Թմրադեղ
Ռոսինիի օպ. հերոս / Զինվոր, փիղ
Մարդ / Հունական տառ
Ֆրանս. ավտոմեք. / Հարմոն
Կալսելու տեղ
Քնար համաստեղություն. աստղ
Պռոշյանի վեպի հերոս
Տեսակավոր կոնյակ
Սկանդինավ. աստվ. / Չինական քաղաք
Չեխ երգահան / Վանք, Արցախ
Ֆաշիստական ծովակալ
Կավե անոթ
Թոմաս ...
Ներշնչանք / Ֆրանս. կինոգետ
Նավի խորտակում / Հին
Բեթհովեն, սիմֆոնիա
Ուսերի ծածկոց
«Ֆաուստ», «Սաֆո»
Հացահատիկ / Հունգար ֆիզիկոս
Հ
«Կենսուրախ այրին», օպերետ
Հատկանիշ
Մինոր
Փափուկ, ճկուն մետաղ
... Քլինթոն
Շինանյութ
Վարած հող
Նեցուկ, պաշտպան / Անվախ
Օխոտի ծովի ծոց
Նամակաքարտ / Պարսկ. հին դրամ
Կովկասում ապրած ժողովուրդ
Շնագայլ
Գեր / «... արքա»
Դեղին ներկանյութ
«... բռինչ»

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Աստղագուշակ

28.06 - 04.07

Խոյ - Կստանաք այն, ինչի ձգտում եք, նաեւ կարժանանաք այն մարդու համակրանքին, որի լավ վերաբերմունքը թանկ է ձեզ համար:

Ցուլ - Համաչափ հաջողակ շաբաթ է: Խորհուրդ է տրվում որոշումներ կայացնել ինքնուրույն:

Երկվորյակ - Մի վիճեք վերացարկված թեմաների շուրջ: Որքան գործնական տրամադրվեք, այնքան հաջող կդասավորվի օրը:

Խեցգետին - Կրճատեք շփումները նույնիսկ այն մարդկանց հետ, ովքեր հասկանում են ձեզ կես խոսքից:

Առյուծ - Նպաստավոր շաբաթ է աշխատանքը փոխելու համար: Հնարավոր են ֆինանսական մուտքեր:

Կույս - Նպաստավոր օր է գործընկերների հետ նոր համագործակցության համար: Կենսասիրության մակարդակը բարձր է, սպորտով զբաղվելը՝ օգտակար:

Կշեռք - Դրական գործոնների ազդեցությունը նկատելի է ոչ միայն գործնական ոլորտում: Անձնական հարաբերությունները նույնպես հրաշալի են դասավորվում:

Կարիճ - Ստիպված կլինեք հակասական զգացողություններ հաղթահարել: Նույնիսկ ամուսնացած Կարիճները կարող են անակնկալներ սպասել:

Աղեղնավոր - Եթե ձեր չմտածված հայտարարություններով չփչացնեք ամեն ինչ, կարիերայի մեջ առաջընթացին երկար չեք սպասի:

Այծեղջյուր - Շաբաթը նպաստավոր է մշակութային միջոցառումների համար: Կենսասիրությունը բարձր մակարդակի վրա է:

Ջրհոս - Խորհրդաժողովների ու նման այլ միջոցառումների կմասնակցեք: Շաբաթը զերծ չէ աննշան թերություններից:

Ձուկ - Անձնական կյանքում հնարավոր են դրական փոփոխություններ: Դա վերաբերում է ոչ միայն միայնակներին:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1. c5-f8 c1:c5 2. f8:f6x

Խնդիր N2 1. h2-g3 a3:c5 2. g3-f4 g5:e3 3. f2:h8x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու
Հայաստանի չեմպիոն,
IDF վարպետ,
սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 27.06.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: